Հաստատված է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2021թ. փետրվարի 11-ի թիվ 9 նիստում

գիտական խորհրդի նախագահ

[illegible]

«Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2021

1. Սույն կարգով սահմանվում են «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՊՄՀ) աշխատողներին պարգևատրման և խրախուսանքի (ներառյալ դրամական) տեսակները, տրամադրման պայմանները և ընթացակարգը:

2. ՀՊՄՀ-ում պագևատրումը կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով նախատեսված ամսական, եռամսյակային, կիսամյակային պարբերականությամբ կամ մեկանգամյա վճարվող վարձատրությունն է:

3. ՀՊՄՀ-ում պագևատրումը տրամադրվում է աշխատողին ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու, մեծ ծանրաբեռնվածությամբ, սեղմ ժամկետներում նոր նախաձեռնություններ, ձեռնարկումներ, նորարական ծրագրեր, գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքներ իրականացնելու համար:

4. ՀՊՄՀ-ում խրախուսանքը տրամադրվում է՝ անկախ զբաղեցրած պաշտոնից, այն աշխատողին, ով պատշաճ որակով, գերազանց կատարողականով և բարեխիղճ կատարել է ՀՊՄՀ ստորաբաժանման կանոնադրությամբ և (կամ) պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթները և պարտականությունները, բացառիկ ներդրում է ունեցել ՀՊՄՀ-ի ռազմավարական նշանակության առանձին խնդիրների իրականացման գործում և (կամ) նպաստել է ՀՊՄՀ-ի կայուն և առաջընթաց զարգացմանը, ինչպես նաև առանձին աշխատողներին՝ ՀՊՄՀ-ում երկարամյա, բարեխիղճ աշխատանքի և ծառայության համար:

5. ՀՊՄՀ-ում կիրառվում են խրախուսանքի հետևալ տեսակները'

1) ՀՊՄՀ-ի մեդալ,
2) ՀՊՄՀ-ի պատվոգիր,
3) ՀՊՄՀ-ի շնորհակալագիր,
4) շնորհակալության հայտարարում,
5) միանվագ դրամական պարգևատրում,
6) հուշանվերով պարգևատրում,
7) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում,
8) կարգապահական տույժի հանում:

6. Սույն կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված խրախուսման դեպքում աշխատողին տրվում է ՀՊՄՀ-ի ռեկտորի ստորագրությամբ և կնիքով վավերացված պատվոգիր:

7. Սույն կարգի 5-րդ կետի 3-րդ ենթակետում նշված խրախուսման դեպքում աշխատողին տրվում է ՀՊՄՀ-ի ռեկտորի ստորագրությամբ և կնիքով վավերացված շնորհակալագիր:

8. Սույն կարգի 5-րդ կետի 5-րդ ենթակետում նշված խրախուսման դեպքում աշխատողին տրվող միանվագ դրամական պարգևատրության առավելագույն մեծությունը չի կարող գերազանցել տվյալ աշխատողի ամսական դրույքաչափի կրկնակին: Միանվագ դրամական պարգևատրությունը տրվում է ՀՀ դրամով:

9. Սույն կարգի 5-րդ կետի 6-րդ ենթակետում նշված խրախուսման դեպքում աշխատողին հուշանվերով պարգևատրման դեպքում հուշանվերի գումարի չափը չի կարող գերազանցել

տվյալ աշխատողի ամսական դրույքաչափի կրկնակին:

10. Սույն կարգի 5–րդ կետի 7-րդ ենթակետում նշված խրախուսման դեպքում աշխատողին տրամադրվող լրացուցիչ վճարովի արձակուրդի տևողությունը չի կարող գերազանցել 4 աշխատանքային օրը:

11. Սույն կարգի 5–րդ կետի 7-րդ ենթակետում նշված խրախուսման դեպքում հանվում է աշխատողի չմարված կարգապահական տույժը՝ դրա առկայության դեպքում: Մեկից ավելի կարգապահական տույժ ունեցող աշխատողի նկատմամբ որպես խրախուսման միջոց կարող է կիրառվել ընդամենը մեկ կարգապահական տույժի հանումը:

12. Սույն կարգի 5-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված խրախուսանքի տեսակները կարող են կիրառվել տարեկան առավելագույնը 1 անգամ:

13. ՀՊՄՀ-ի կոլեկտիվ պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով կարող են սահմանվել խրախուսանքի այլ տեսակներ:

14. Մեկ տարվա ընթացքում սահմանված կարգով չմարված կամ չհանված կարգապահական տույժ ունեցող աշխատողը զրկվում է սույն կարգի 5–րդ կետում նշված խրախուսական միջոցներից, բացառությամբ նույն կետի 8-րդ ենթակետում նշված «կարգապահական տույժի հանում» խրախուսանքի միջոցից:

15. ՀՊՄՀ աշխատողին Խրախուսման համար հիմք է հանդիսանում խրախուսման արժանի աշխատողի անմիջական ղեկավարի կողմից ՀՊՄՀ ռեկտորի անունով ներկայացված զեկուցագիրը, միջնորդությունը կամ առաջարկությունը:

16. Սույն կարգի 14-րդ կետում նշված փաստաթղթերը չեն պահանջվում, եթե աշխատողը չունի անմիջական ղեկավար կամ որի անմիջական ղեկավարը ռեկտորն է: Այդ դեպքում աշխատողը ներկայացվում է խրախուսման առանց այդ փաստաթղթերի:

17. Խրախուսանքի դրամական չափը որոշում է ՀՊՄՀ-ի ռեկտորը՝ ՀՊՄՀ-ի բյուջեով նախատեսված միջոցների սահմաններում:

18. Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ՀՊՄՀ-ի աշխատողը կարող է ներկայացվել պետական պարգևների: